ԵՍ ՀԱՂԹԵԼ ԵՄ ԱՇԽԱՐՀԻՆ
ԻՄ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ԵՄ ՏԱԼԻՍ ՁԵԶ

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. ՀՈՎՀԱՆՆԵՍ 16.29-33

29 Աշակերտները նրան ասացին. Այժմ ահա բացահայտ ես խոսում և ոչ մի առակ չես ասում: 30 Հիմա հասկանում ենք, որ դու ամեն ինչ գիտես ու կարիք չունես, որ որևէ մեկը քեզ բան հարցնի: Սրանով հավատում ենք, որ դու Աստծուց ես ելել: 31 Հիսուսը նրանց պատասխանեց. Հիմա հավատո՞ւմ եք: 32 Ահա ժամանակը գալիս է, և արդեն իսկ եկել է, երբ բոլորդ կցրվեք, յուրաքանչյուրը՝ իր տունը, և ինձ մենակ կթողնեք: Բայց ես մենակ չեմ, որովհետև Հայրն ինձ հետ է:

33 Այս բաներն ասացի ձեզ, որպեսզի ինձնով խաղաղություն ունենաք: Աշխարհում նեղություն պիտի ունենաք, բայց քաջալերվե՛ք, որովհետև ես հաղթել եմ աշխարհին:

The Personnel Journal-ը հաղորդում է այս անհավանական վիճակագրությունը. գրանցված պատմության սկզբից ի վեր ամբողջ աշխարհը խաղաղության մեջ է եղել ժամանակի ութ տոկոսից էլ պակաս: Ուսումնասիրության ընթացքում պարզել է, որ 3530 տարիների արձանագրված պատմության մեջ միայն 286 տարին է խաղաղություն տեսել, և ավելի քան 8000 խաղաղության պայմանագիր է կնքվել և խախտվել: (Moody Bible Institutes Today In The Word):

I. ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՍՏԱՑՎԱԾ Է:

33 Այս բաներն ասացի ձեզ, որպեսզի ինձնով խաղաղություն ունենաք:

- ***Հիսուսն այս խոսքերն ասաց իրեն ծեծելուց և խաչելուց մի քանի ժամ առաջ:***

  *Հովհաննես. 14.27 – Խաղաղություն եմ թողնում ձեզ, **<u>իմ խաղաղությունն</u>** եմ տալիս ձեզ. ես այն ձեզ չեմ տալիս, ինչպես աշխարհն է տալիս. ձեր սիրտը <u>թող չխռովվի</u> ու չվախենա:*

  Հովհաննես 20.19 – Նույն օրը՝ շաբաթվա առաջին օրվա երեկոյան, երբ հրեաներից վախի պատճառով աշակերտները հավաքվել էին մի տեղ և դռները փակել, Հիսուսը եկավ, նրանց մեջտեղում կանգնեց և ասաց նրանց. Խաղաղությո՛ւն ձեզ:

  Հովհաննես 20.26 Ութ օր հետո աշակերտները դարձյալ ներսում էին. նրանց հետ էր նաև Թովմասը: Հիսուսը մտավ փակ դռներով, նրանց մեջտեղում կանգնեց և ասաց. Խաղաղությո՛ւն ձեզ:

  Երկու արվեստագետներ ձեռնամուխ եղան կատարյալ խաղաղություն ներկայացնող նկար նկարելու: Առաջինը նկարեց մի կտավ, որտեղ պատկերված էր մի փոքրիկ լճի վրա նավակի մեջ նստած անհոգ տղայի՝ առանց ալիքների՝... Մյուսը նկարեց կատաղի քամի և ալիքներ, որտեղ քամիները թափահարում են նավակը, իսկ Հիսուս խաղաղութեամբ նավակի մէջ քնած էր:

Եսայի 9.6 – Որովհետև մեզ մի մանուկ ծնվեց, մեզ մի որդի տրվեց, և իշխանությունն իր ուսերի վրա կլինի, և կկոչվի Սքանչելի Խորհրդական, Հզոր Աստված, Հավիտենականության Հայր և Խաղաղության Իշխան:

- ***Հիսուսին անվանում են Խաղաղության Իշխան, քանի որ Նա է մեզ խաղաղություն տվողը: Նա նախընտրեց գնալ դեպի խաչը և Իրեն որպես զոհ մատուցել խաչի վրա մեր մեղքերի համար, որպեսզի մենք կարողանանք խաղաղություն ունենալ Աստծո հետ: Նա շտկեց Աստծո հետ մեր խզված փոխհարաբերությունը:***

- ***Այն փաստը, որ Հիսուսը կոչվում է Խաղաղության Իշխան, մեզ հնարավորություն է տալիս դառնալ խաղաղարար(ներ):***

Բ Կոր. 13.11 – Արդ, եղբայրնե՛ր, ուրա՛խ եղեք, կատարյա՛լ եղեք, մխիթարվե՛ք, միաբա՛ն եղեք, խաղաղությո՛ւն արեք, և սիրո ու խաղաղության Աստվածը ձեզ հետ կլինի:

Ինչպե՞ս ապրել խաղաղության մեջ ինքդ քեզ հետ և ուրիշների հետ:

Հռոմեացիս 12.18 – Եթե հնարավոր է, որքան ձեզանից է կախված, բոլոր մարդկանց հետ խաղաղությա՛մբ մնացեք:

- ***Հնարավոր է լինել խաղաղության մեջ, եթե մենք <u>մնանք Հիսուսի մեջ</u>:***

36 Աշխարհում նեղություն պիտի ունենաք...

II. ԱՍՏԾՈ ԽՈՍՏՈՒՄՆ Է՝ ՄԵԶ ՏԱԼ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆ ՆԵՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ:

- ***Նկատի ունեցեք, որ խաղաղ չի նշանակում «հեշտ»: Հիսուսը երբեք հեշտ կյանք չի խոստացել. Նա միայն օգնություն է խոստացել: Իրականում Նա մեզ ասաց, որ այս աշխարհում կունենանք նեղություններ (Հովհաննես 16.33) և փորձություններ (Հակոբոս 1.2):***

> ***“Խաղաղությունը նեղության բացակայությունը չէ: Դա Քրիստոսի ներկայությունն է այդ դժվարության մեջ: - Ծեյլա Ուոլշ***

- ***Հիմա հարցը նրանումն է, թե ինչպե՞ս ենք խաղաղություն պահպանում նեղության/դժվարության/փորձության մեջ:***

Եսայի 26.3-4 – <u>Հաստատուն միտք</u> ունեցողին դու պահում ես կատարյալ խաղաղության մեջ, քանզի քեզ է հուսացել: Հավիտյան Տիրո՛ջը վստահեք, որովհետև Տեր Աստված հավիտենական վեմ է...

Քրիստոնյա մի բժիշկ վերջերս հետաքրքիր հարցում է անցկացրել իր հիվանդների մասնակցությամբ: Մինչ նրանք սպասում էին սպասասրահում, նրանց խնդրեցին լրացնել մի փոքրիկ հարցում իրենց մասին: Հարցերից մեկը հետևյալն էր՝ «Ո՞րն է ձեր թիվ մեկ ցանկությունը»: Պատասխանները վերլուծելով՝ բժիշկը պարզել է, որ իր հիվանդների 67%-ի թիվ մեկ ցանկությունը մտքի խաղաղությունն է: (Ռիչարդ Ջոնս)

Հռոմեացիս 15.13 – Եվ հույսի Աստվածը թող ձեզ ամեն ուրախությամբ և խաղաղությամբ լցնի հավատի մեջ, որպեսզի Սուրբ Հոգու զորության հույսով առատանաք:

“ Աստծո ներկայության մեջ տիրում է կատարյալ խաղաղություն: Եվ դա հենց այն տեղն է, որտեղ ես ցանկանում եմ լինել: - Թրեյսի Բրեյլոք

Փիլիպպեցիս 4.6-7 – Ոչնչի համար մի՛ մտահոգվեք, այլ ամեն բանում աղոթքով, աղաչանքով և գոհությամբ՝ ձեր խնդրանքները թող հայտնի լինեն Աստծուն: Եվ Աստծու խաղաղությունը, որ ամեն մտքից վեր է, ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսով կպահպանի:

III. ՀԱՂԹԱՆԱԿԸ ԽՈՍՏԱՑՎԱԾ Է:

...բայց քաջալերվե՛ք, որովհետև ես հաղթել եմ աշխարհին:

*Կող. 2.14-15 – **14** Եվ ջնջեց մեր դեմ դատավճռի ձեռագիրը և այն մեջտեղից վերացրեց ու խաչափայտին գամեց, **15** իշխանություններին և պետություններին մերկացնելով՝ հայտնապես խայտառակեց ու նրանց հաղթեց իրանում.*

*Ա Կորնթացիս 15.26, 54-55 – 26 Վերջին թշնամին, որ կխափանվի, մահն է, **54** ...Մահը հաղթության մեջ ընկղմվեց: **55** Ո՛վ մահ, ո՞ւր է քո խայթոցը, գերեզմա՛ն, ո՞ւր է քո հաղթությունը:*

***57** Բայց շնորհակալություն Աստծուն, որ մեզ հաղթություն տվեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով:*

Ա Հովհաննես 5.4-5 – որովհետև ամեն ոք, ով Աստծուց է ծնված, հաղթում է աշխարհին: Սա՛ է այն հաղթությունը, որ աշխարհին հաղթեց, այսինքն՝ մեր հավատը: Եվ ո՞վ է, որ աշխարհին հաղթում է, եթե ոչ նա, ով հավատում է, որ Հիսուսն Աստծու Որդին է:

“ Աստված մեզ թույլ չի տա երկքաղաքացիության շքեղությունը: Այս աշխարհը խաչը հանեց Իր Որդուն, և Աստված կոչ է անում մեզ հաղթել աշխարհին: Մենք պետք է գիտակցենք, որ աշխարհը մեզ թշնամի է, մի համակարգ, որը սնվում է Սատանայի կողմից և հաճելի է մարմնին:

Հռո. 12.2 – Եվ մի՛ կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով, այլ վերափոխվե՛ք ձեր մտքի նորոգությամբ, որպեսզի դուք քննեք Աստծու կամքը, թե որն է բարին, հաճելին ու կատարյալը:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ